Հարգելի գործընկերներ,

Սույնով տեղեկացնում ենք, որ «ՅՈՒՔՈՄ» ՍՊԸ-ն նախատեսում է 2019թ.-ի մայիսի 16-ից հուլիսի 15-ն իրականացնել անվանական արժեկտրոնային պարտատոմսերի տեղաբաշխում: Տեղաբաշխումն իրականացվելու է արտաբորսայում՝ բաժանորդագրության ձևով: Որպես տեղաբաշխող հանդես է գալու ԱՐՄԵՆԲՐՈԿ ԲԲԸ-ն:

ՀՀ Կենտրոնական Բանկի նախագահի 26/11/2018թ.-ի թիվ 1/808Ա որոշմամբ հաստատվել է «ՅՈՒՔՈՄ» ՍՊԸ-ի կողմից թողարկվող պարտատոմսերի ազդագիրը: ՀՀ Կենտրոնական Բանկի նախագահի 02/05/2019թ.-ի թիվ N1/256Ա որոշմամբ գրանցվել է ազդագրի լրացումը: Ազդագրի, լրացման և վերջնական պայմանների հաստատման էլեկտրանային տարբերակները հրապարակված են https://thogharkogh.cba.am/azdagirindex.shtm, www.ucom.am, և www.armenbrok.am կայքերում:

Թողարկման հիմնական պայմանները ներկայացված են ստորև.

Թողարկողը (թողարկողի անվանումը)	«ՅՈՒՔՈՄ» ՍՊԸ	
Պարտատոմսի տեսակը	Անվանական արժեկտրոնային պարտատոմս	
Տեղաբաշխողի անվանումը, գտնվելու վայրը	«Արմենբրոկ» ԲԲԸ, ք. Երևան, Տիգրան Մեծի փ. 32/1 թիվ 8 տարածք; ք. Երևան, Ամիրյան փող., 4/7 շենք, («ՅՈՒՔՈՄ» ՍՊԸ -ի «Ամիրյան» սպասարկման սրահ)	
Տեղաբաշխման ձևը	Մասնակի երաշխավորված	
Տեղաբաշխման ժամանակահատված (օր/ամիս/տարի)	16/05/2019-15/07/2019	
Արժեկտրոնների վճարման հաճախականությունը	եռամսյակային	
Արժեկտրոնների վճարման օրեր	16/08/2019, 16/11/2019, 16/02/2020, 16/05/2020, 16/08/2020, 16/11/2020, 16/02/2021, 16/05/2021, 16/08/2021, 16/11/2021, 16/02/2022, 16/05/2022	
Մարման ամսաթիվ (օր/ամիս/տարի)	16/05/2022	
Շրջանառության ժամկետը	36 ամիս	
Թողարկման արժույթը	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար
ԱՄՏԾ	AMUCOMB22ER4	AMUCOMB21ER6
Տարեկան արժեկտրոնային եկամտաբերություն	11%	7.5%
Թողարկման ծավալ	250,000,000 (երկու հարյուր հիսուն միլիոն)	5,000,000 (հինգ միլիոն)
Տեղաբաշխման ենթակա ծավալ	250,000,000 (երկու հարյուր հիսուն միլիոն)	5,000,000 (հինգ միլիոն)
Մեկ պարտատոմսի անվանական արժեք	100,000 (մեկ հարյուր հազար)	100 (մեկ հարյուր)
Քանակ (հատ)	2,500 (երկու հազար հինգ հարյուր)	50,000 (հիսուն հազար)
Արժեկտրոնի օրերի հաշվարկման կարգը	Փաստացի /Փաստացի	
Կարգավորվող շուկայում առևտրին թույլտվություն	Թողարկողը պարտադիր դիմելու է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ԲԲԸ՝ պարտատոմսերը կարգավորվող շուկայում ցուցակելու համար	
Շուկա ստեղծող (Market maker)	«ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ	

Պարտատոմսերի պոտենցիալ գնորդների նկատմամբ սահմանափակումներ չկան:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել «ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ հետևյալ հեռախոսահամարներով՝ +37411 591111, +37411 400400, կամ «ՅՈՒՔՈՄ» ՍՊԸ հետևյալ հեռախոսահամարով՝ +37411 591111: